

## ԿՈՏՈՐ ՄԻ ԱԴ.

Հիանալի է աղին ձեւացումը, այն բիւրեղին որ թանկագին է քան զամենայն բիւրեղս, և անհրաժեշտ կարեոր մեր կենացը։ Աղը երկու օտար գոյացութեանց բաղադրութենէն յառաջ կու գայ, արծաթագոյն մետաղէ և դեղնականաչ կաղէ։ Բաղդատմամբ ուրիշ մետաղաց որ պինդ և ծանր են, աղը ձեւացնող մետաղն այնպէս թեթև է, որ կը լիւղայ ջրոյ վրայ, և այնպէս կակուղ որ կտրոցով կը կտրի և ձեռքով կը մանրի։ Ուրիշ մետաղներն կ'ընդդիմանան օդոյ ճնշմանը, իսկ ասիկա հազիւ թէ քիչ մը խոնաւութիւն տեսնայ կը թթուուկանայ, և յսպիտակ փոշի կը փոխարկի։ Ահա այսպիսի է նատր անուն մետաղը, որ ջրոյ հետ շփուելով կը մանրի՝ ի փոքրիկ մասունս, որք շուտով կ'այրին, և կը սկսին հեղուկ բոցոյ պէս փայլիլ և ջրոյ մակերեսութիւն վրայ պտըտիլ։

Եթէ ուղենաս այս պղտի մասերէն մին ձեռքդ առնուլ, կը տեսնաս որ ձեռքէդ կը սահի, ուղելով իմն իր առաջին աղատութիւնը նորէն ստանալ։ Բոլոր այս մասերն կապոյտ բոցով մը պատած են, և կը տեսնաս որ մէկ քանի վայրկեանէն մետաղը բոլորովին կ'անհետանայ, իրեն յատուկ հոտէն զատ ուրիշ բան չի թողլով, զոր և հաղորդէ ջրոյն։ Աղը ձեւացնելու համար նատրի հետ միացեալ կաղը կոչի քլու, որ ոչ ձեւ և ոչ գոյացութիւն ունի։ Օգոյ շնչման պէս անարգել կը հատանէ մթնոլորտը, և կանաչի զարկած դեղնագոյն տկար շոգւոյ կերպարանաւ կը ցուցընէ ինք զինքը։ Եթէ ամանի մէջ դրած ճնշեմք, հեղուկ մարմնոյ ձեւ կ'առնուլ. իսկ թէ որ զինքը այս վիճակիս հասցնելու համար տուած ճնշումը դադրեցնեմք, մէկէն իր առաջին շոգւոյ ձեն կ'առնուլ։ Եթէ մարդ կամ անասուն շնչէ այս կաղը, մէկէն շնչարգել կ'ըլլայ. սակայն բնութեան ամեն մարմնոց մէջ իր օգտակար մասն ունի։ Քլուը առանց բացառութեան ամեն

մարմնոց հետ յարմարելու լաւ յատ. կութիւն մ'ունենալով, մեծ յարգ ունի տարրաբանութեան մէջ։ Այս մարմնոյն ծառայութիւններն անհրաժեշտ կա. րեոր են մեզի վտանգաւոր առթից մէջ։ Քլուն է որ կը չէզոքացնէ վտանգաւոր արտաշնչութիւնները, և մաքրէ հիւան. դաց սենեկաց և հիւանգանոցաց օղը։

Այս երկու օտար և այլասեռ գոյացութիւններն, մետաղն և վիրոյիշեալ կազն, կը ձգին միանալ իրարու հետ, բայց հազիւ թէ հանդիպին մէկմէկու կ'եղծանին իրարմէ։ Երբոր մետաղը յագենայ կազով, այս երկու մարմնոց բաղադրութենէն յառաջ գայ լնագոյն պղտի բիւրեղ մը դատարկ խորանարդի նման, որոյ փոքրիկ մասնիկներն իսկ թափանցիկ են։ Եւ այսպէսով կը վեր. նայ քլուի թիւնաւորիշ զօրութիւնը և նատրի դիւրավառ յատկութիւնը, և բաղադրուելով իրարու հետ՝ կ'արտա. բերեն զաղ։

Բնութիւնը մայր ամենայն մարմնոց այնպիսի առատութեամբ հոգացած է մեզի աղ, որ աշխարհիս գրեթէ ամեն կողմը կը գտնուի մեծազանգուած քա. նակով։ Երկիրս կը պահէ զայն իր խա. ւարային ծոցին մէջ և կը յայտնէ ամե. նափայլուն կերպարանաւ իր մակե. րեութիւն վրայ։ Ծովը իր փրփրադէզ ալիքներէն սկսեալ մինչև խորունկ յա. տակը լի է աղով։ Աղը բժշկութեան ա. մենազօրաւոր նիւթերէն մէկն է. ա. ռանց աղի բոլոր ջուրերն և միսերն կը հոտէին, որով ապականէր ամենայն մարմին։

Եւրոպիոյ արևելակողմը ուղեորող ճանապարհորդն կը հանդիպի լերանց երկայն շղթայի մը, որոց մէջ կը տես. նայ տարածուած ծիծաղադէմ հովիտ մը, և 'ի նմա աղքատին բայց մաքուր բնակութիւններ։ Ոյք են այս բնակու. թեանց բնակիչքը. Գործօն և աշխա. տասէր ժողովուրդ մը, որուն աշխար. հիս վրայ ունեցած մեծ վայելքն է ու. նենալ մթնագոյն կտաւէ զգեստ մը և կաշիէ գոգնոց մը։ Բայց այսու հան. դերձ գոհ են իրենց վիճակին վրայ, և

՚ի նշան գոհութեան , ուրախ և զուարթ երգեր կ'երգեն : Ասոնք որ հոն ծնած են և թերես հոն ալ պիտի մեռնին անտանելի աշխատութեամբ , փորձ ըլլալով նոյն տեղեաց , յօժարութեամբ կ'առաջնորդեն ճանապարհորդին երկրին ծոցը աղահանքաց մէջ մտնելու . Երբ ճանապարհորդին աչքը վարժի կանթեղին պլազացող լուսոյն զոր առաջնորդն գլխարկին վրայ կը կրէ , կը տեսնայ առ ՚ի շեղ գետնոյ վրայ հաստատուած փայտէ երկու դերաններ երկաթուղոյ նման՝ և ասոր վրայ մերենայ մը : Ականահատը կը նստի դիմացը և ձին լծելով մեքենային , կը մեկնի և կը սահի անըմբոնելի երագութեամբ այն գերանաց վրայ : Այն աստիճանի է երագութիւնը որ ականահատը չի գահավիժելու համար ձեռքը խոշոր կաշիէ ձեռնոց մը անցուցած , կը բռնադատուի բռնելու գետնափոր տեղույն պատերէն կախուած չուանը՝ ջանալով չափաւորել ընթացից երագութիւն : Վերջապէս ձին կը կենայ հոն ուր կը դազրի գետնոյն զառ ՚ի փայր ընթացքը , և կը մտնայ նոյն գետնոյն վրայ բացուած ընդարձակ սրահին մէջ :

Աստ անդ ցրուած կեցած են մեծաքանակ աղի կոյտեր , ոմանք անգոյն և այլք գեղեցիկ երկնագոյն : Սրահին կամարքն ՚ի վեր ունին հսկայածն աղէ սիւներ , որ գեղեցիկ կերպով կը ցոլան ՚ի ճառագայթից լուսոյ : Սակաւ մի ՚ի բացեայ ականահատներն կ'աշխատին և կը կտրեն աղահանքին կողերէն մեծազանգուած աղի կտորներ :

Բագում երկայն և մութ սրահից լաբիւրինթոսի մը մէջէն անցնելէն ետքը , կ'անցնի ճանապարհորդն կամարի մը տակէն և կը հասնի սանդղոյ մը՝ ուսկից պէտք է մեծաւ զգուշութեամբ իջնալ , ինչու որ վտանգաւոր է :

Անզաս իջնելէն ետքը , կը տեսնայ առջին հարիւրաւոր շողջողուն լոյսեր . և մինչ հիացած և շացած աչօք ուր նայելն չի դիտեր , մեծատարած եկեղեցոյ մը սեմոցը վրայ կը գտնայ ինք զինքը . որուն պատերն կը փայլին ամենայն

ուղղութեամբ , երբ ջահից լոյսն զարնէ այն աղէ բիւրեղից վրայ յորոց կազմեալ են : Սեղանք , խաչք և պատկերը ամենայն ինչ աղէ են : Կան մինչև աղէ արձաններ , որ կը ներկայացնեն զբարեպաշտա աղօթելու դրից մէջ : Եկեղեցոյն քովը պարու սրահ մը կայ , ուր նստարաններն , սենեակներն և անկողիններն և ամենայն կահկարասիք աղէ են : Ճշմարիտ նմանութիւն մ'արտաքին աշխարհի :

Կամաց կամաց կամարներն կը ցածնան , պատերն կը մօտենան , ճանապարհորդն կը բռնադատի խոնարհելու , ծռելու , չռքելու , միով բանիւ չորս ոտքով քալելու : Բայց իր այսպիսի ծանր աշխատութիւնը կը վարձատրի հիանալի տեսարանով մը : Կը տարածուի աչացը առջին ընդարձակ լիճ մը լուսաւորեալ ՚ի ջահից որ հաստատուած են աղահանքին պատերուն վրայ : Այս անշարժ և անձայն լիճը կը տարածուի այնպիսի մութ կամարաց տակ որ աչաց տեսութիւնը չի բաւեր և չի կրնար չափել թէ մինչև ուր կը ձգի : Թեք թըռչնոց երբեք պիտի չի խանդարեն այս խորհրդական լճին գեղեցկութիւնը , և ոչ փշմունք հողմոց պիտի ալեկոծեն իւրեն մակերեսոյթը : Աղի կտորներն որ յամենուստ կը շրջապատեն զիճը՝ երկաթէ պատուարի մը կը նմանին՝ որ կանգնեալ կան հոն լեռնանման , ստիպելու զնա մնալ ՚ի մշտնջենաւոր լուսութեան և յանշարժութեան : Հիանալի բայց միանգամայն ահաւոր տպաւորութիւն մը կ'ընէ ճանապարհորդին վրայ այս լճին լուսութիւնը և մեռելատիպ անշարժութիւնը յայնքան դարուց հետէ : Եղերացը վրայ կը տեսնուին մէկ քանի խեցիներ և ծովային բուսոց մնացորդներ , առարկայք բնական պատմութեան և ժամանակակիցք յեղափոխութեան երկրագնտոյս :

Նաւակով մը անցնելով լճին վրայէն , միւս ափանցը վրայ փոքրիկ մատուռ . մը կը գտնեմք , որ պատմական մեծ յարգ և կարեորութիւն ունի : Այս մատուռը նուիրուած է ՚ի յիշատակ լեհ թագու-

հւոյ մը, որուն ձեռքովը յամին 1252 հարստութեան մեծ դանձ մը յայտնուեցաւ: — Կ'աւանդէ պատմութիւնը որ այս թագուհիննոյն ատենները չունդարիա դտնուելով և հոն լսելով որ իր հայրենիքը մեծ սովոյ և թշուառութեան մէջ է, ներքին ներշնչմամբ իր մէկ մատանին որ ունեցած ականցը մէջ ամենասիրելին էր՝ ջրհորը կը նետէ: Երբ լեհաստան կը դառնայ, ոմանք յազնուականաց ուղելով իրենց թագուհին պատուել, աղի մը կտոր կ'ընծայեն իրեն. զոր նոր գտած ըլլալով՝ մեծագին բիւրեղ մը կը կարծէին: Աղին կտորը յինքեան մեծ աժէք մը չունէր, բայց ինչպէս զարմացաւ թագուհին երբ տեսաւ իր ջրհորը ձգած մատանիննոյն թափանցիկ աղին կտորին մէջ ագուցեալ: Թագուհին այս դիպուածը նախախնամական ազդարարութիւն մը համարեցաւ, յարգեց թանկագին առարկայն, և այս կերպով յայտնուեցաւ վիլիչգայի աղահանքը, որ ոսկւոյ և աղամանդի հանքի պէս հարստութեան ճոխ աղբիւր մ'եղաւ լեհաստանի:

Այս մատուէն քիչ հեռու աշխատութիւնը կը սկսի դարձեալ: Ոմանք յականահատից զբաղած են կամ տեղափոխելու մեծահատոր աղից կտորները, և կամ օդ հանելու մեծազանգուած աղից մասերը: Այլք բալիսիրով մը՝ զոր կը ձգեն ձիանք՝ կը տանին պատրաստեալ աղերը, և կէպ կը պարապին աղի նոր երակներ գտնելու և կամ ուշ դնելու կամարաց հաստատութեան: Եղած աշխատութիւնը յետին աստիճանի տաժանելի է. անանկ որ գործաւորը երբ յետ ժամանակաց երկրիս երեսը կ'ելլան և բախտ կունենան զարև տեսնալու, այնպէս է իրենց համար իրքն թէ առաջին անգամ լոյս կը տեսնան:

Յիրաւի հիանալի է վիլիչգայի աղահանքը իր հնութեամբն և ընդարձակութեամբն. յամէ 1252 մինչև հիմա կը բանեցնեն, տարին 100,000 տակառ աղ հանելով, և դեռ անսպառելի է, և մանաւանդ օր օրուան վրայ նորանոր երակներ կը յայտնուին: Այնպիսի է

մէջի ընդարձակութիւնն որ ունի մէջ հասարակապետութիւն մը, գլխաւոր կառավարիչ մը, կարդ, կանոն, ամբողջ ընտանիքներ, հրապարակական ճամբաներ, կառքեր, ձիեր աղ հանելու համար: Զիերը անզամ մը որ ներս մտնեն, ալ ելլալիք չունին. իսկ գործաւորը երբեմն պատճառաւ իրենց գործողութեանը գուրս կ'ելլան. անանկ որ շատերը հոն ծներ և հոն թաղուեր են:

Աղուձակը կամ չանքային աղը աւելի կամ նուազ կանոնաւոր ձեռվժայուից մէջ կը ձևանայ, և Երկրագընտոյս գրեթէ ամեն կողմը կը գտնուի առատութեամբ: Նորվեկիոյ մէջ Պէրկէն և Սպանիոյ մէջ Քարտոնա՝ գողցես հաւասար առատութեամբ ունին նոյն աղէն: Քարտոնայի մօտ դաշտի մը մէջ աղի հսկայածև ժայռ մը կը բարձրանայ լեռնանման, և ճշմարիտ սառնարանի նման կը փայլի 'ի ճառագայթից արեգական, և հազարաւոր ցոլմունքներ կ'արձակէ երբ արեգակն 'ի մուտս է: Եւ այս աղէն կը շինեն ընչատուփ, խաչ, մատանի և ուրիշ առարկաներ: — Անդզիոյ մէջ մեծ համբաւ ունի Նորվիք իր աղի դաշտացը համար, որ քսան փարսախ տեղ կը տարածուին: — Աւտրիոյ մէջ Սալիսպուրկ՝ իր անունը մտերն եղած աղահանքէն առած է: Մեկսիկոյ, Հայաստան, Պարսկաստան՝ Արևելք և Արևմուտք, աշխարհիս ամեն կողմը ընդարձակ աղահանքներ կան:

Թէպէտ ընդհանրապէս ամեն տեղ կը գտնուի աղ, բայց ամենքն ալ հաւասար մի և նոյն աստիճանի մաքրութիւն չունին, այլ ըստ մեծի մասին խառնուած են օտար նիւթերով աւազով և կաւով: Բայց կարելի է մաքրել աղը այս նիւթերէն մեքենայից ձեռքով ջուր մտցնելով աղի բնական հանքաց ճեղքուածոց մէջ: Աղը լուծուելէն ետքը զօրաւոր ջրհանաւ մը ջուրը գէպ 'ի վերքաշելու եմք. յետոյ պէտք է շողիացընեմք ջուրը մեծամեծ կատաներով և ապա ժողովեմք աղը: Այս կերպով աղը, յառաջ քան գործածելի ըլլալու համար, բնութեան երկու մեծամեծ զօ-

բութիւններէ կ'անցնի 'ի ջրոյ և 'ի հրոյ :

Բայց մէկ քանի երկիրներ բնութիւնը աւելի բարերար գտնուելով, ինքը կերպով մը վրան առած է աղը ջրոյ մէջ լուծելու պաշտօնը, զոր լուծելէն ետքը ազբերաց մէջ կը ժողովէ, և այն կողմի մարդկանց ուրիշ բան չի մնար ընելու բայց եթէ ամանով մը հանել ջուրը աղբիւրէն։ Մունտէնի մէջ, 'ի Բրուսիա, ջրհոր մը կայ 2000 ոտք խորութեամբ, որուն ջուրը թէօմիւրի 25° ջերմութիւն ունի և կը լուծէ շարունակ աղի մեծամեծ հատորներ։

Թէպէտ աղը օգտակար՝ նա մանաւանդ անհրաժեշտ կարեոր է մարդկութեան և ամենայն մարմնոց, բայց բնութեան մէջ չկայ տեսարան որ կարենայ հաւասարիլ աղի դաշտաց ամուլ և ամայի տեսարանին, ուր փոխանակ խոտոյ և գեղեցիկ ծաղկանց կը տեսնուի միայն աղ և ամայութիւն։ Հարաւային Ամերիկոյ մէջ ընդարձակ տարածութեամբ երկիր մ'ուրիշ բան չէ բայց եթէ աղի անապատ մը. բաց աստի և ամենատաք հողմերն որ կը շնչեն ամենայն ուղղութեամբ՝ կ'ապականեն երկիրը անընդհատ։ Ամենեին անձրե ալ չի դար զսվացնելու այս հրատոչոր գետինները։ — Պարսկատանի մէջ դաշտ մը կայ ամուլ և ամայի, ուր և ոչ աղային բոյպք կրնան աճիլ. միայն այն մէկ քանի տեղուանիքն ուր աղին կեղեւ ճեղքուած է ու գիշերային ցողը կրնայ քիչ մը թանալ գետինը, կ'աճին հոն խոտ և մէկ քանի բոյս, բայց և ասոնք յագեալ են աղով և թթու համ մ'ունին։ Կենդանիք չեն կրնար ճարակիլ այս խոտէն, և հովիւք ու խաշինք կը փախչին այս աղի դաշտերէն, վասն զի ուրիշ բան չեն դաներ, բայց եթէ մահ և միայնութիւն։ Նոյն խսկ Եւրոպիոյ մէջ չեն պակսիր աղին պատճառաւ անապատացեալ տեղուանը։

Հիմա որ գիտութիւնը մեծ յառաջադիմութիւն ըրած է, պարզեց և աղային լճերուն ու աղբիւրներուն առեղծուածը։ Այն ջուրը որ կ'իյնայ երկրիս

մակերեւութիւն վրայ ձեան կամ անձրեի ձեռվ՝ կը թափանցէ կ'իջնայ երկրիս խորերը, կը լուծէ հոն աղը և նորէն յերեան կ'ելլայ 'ի ձեռն բնական և արուեստական ճամբաններու։

Բայց տակաւին չեմք կրնար բաւական պայծառ կերպով մեկնել կասպից և Արալ ծովուց մօտերն եղած երկիրներուն ընդարձակ աղի խաւերուն սկիզբը և ծագումը։ Ոմանք 'ի ճանապարհորդաց կարծեցին որ այս մեծատարած աղի խաւերն երբեմն անկողին եղած ըլլան լայնածաւալ ծովուց, որոց ջուրն յանցանել ժամանակաց շողիանալով ուրիշ բան թողած չըլլայ՝ բայց եթէ իր մէջ բովանդակեալ աղը. այս մեկնութիւնը շատ աղէկ կրնայ յարմարիլ Սիպերիոյ և Սահրայի անապատին աղային դաշտաց։ Իսկ այլք կը կարծեն ընդհակառակն՝ որ հիմա երկրիս մակերեւութիւն վրայ գտնուած աղն երբեմն ծածկուած էր գետնի տակ, և ապա յայտնուեցաւ 'ի պատճառս հրաբխային յեղափոխութեանց։ Բայց այս ենթադրութիւնն չի կրնար մեկնել վերոնշանակեալ դաշտաց աղն, ինչու որ որչափ կեղեն վերցնելով գետնին խորը երթամք, այնչափ աւելի կը խտանայ։

Աղը այնպէս կարեոր է մարդուս կենաց պահպանութեանը՝ որ բարբարոս ժողովրդեան մը Օրինագրոց մէջ կը կարդամք ուրիշ պատիմներէն զատ այս ալ նշանակուած՝ որ մահուան դատապարտեալները մեռցնելու համար ստիպեն առանց աղի կերակուր ուտելու։ Այն կենդանիք որ աղէ զուրկ են, մորթերնին կը թափի, վէրքեր կը հանեն և խեղճ կերպով կը մեռնին։ 450 լիպրայ կշռուող մարդ մը ունի իր մէջ առսակաւն մէկ լիպրայ աղ, և այս անհրաժեշտ կարեոր է մարսողական գործողութեան։

Ամենայն ոք գիտէ որ Ռվիխան ծովը աղային է, և եթէ չըլլար՝ իր լայնածաւալ եղերացը վրայ ոչ կենդանիք կը նային ապրիլ և ոչ բոյպք աճիլ։ Դարձեալ ծանօթ է ամենուն որ ամեն ծովուց աղին թանձրութեան աստիճանը

հաւասար չէ իրարու , այլ դէպ 'ի բնեռ աստիճան առ աստիճան կը նուազի : Կըսէ Պ . Սքորէսպի որ Եւրոպիոյ ծովուց մէջ Միջերկրականը ամենէն աղայինն է , իսկ Պալդիկը քան զամենը նուազ աղային . անանկ որ Հիւսիսակողման ձկնորսները իրենց որսացած ձուկը պահելու համար Հարաւակողմանց աղին կը կարօտին : Ատլանտեան Ռվկիանոսը քան զխաղաղականը աւելի աղային է , իսկ Սառուցեալ ծովը քան զամենը աւելի նուազ աղային :

Աղը զջուրը աւելի կը խտացնէ ու կը թանձրացնէ , ուստի և դիւրութեամբ մեծամեծ նաւերն 'ի վեր կը բռնէ : Ծովուց խտութիւնը և թանձրութիւնը կը տարբերի դարձեալ ըստ տեսակի աղին զոր կը բովանդակեն . և որովհետեւ ջուրը բնութեամբ միշտ հաւասարակշիռ կենալ կ'ախորժի , ահա ասկէց յառաջ կու գայ ջրոց երթեւեկը : Որովաղը մեծ շարժիչ մը կըլլայ ծովուց ընթացիցը , ընթացք՝ որ կը կորսուի Ռվկիանու ընդարձակութեան մէջ , կը բարեխառնէ արևմտեան Եւրոպիոյ օդը և կը դիւրացնէ նաւարկութիւնը : Ուստի աղէն մեծ կախումն ունին օդը և կլիմայն և ծովային վաճառականութիւնը :

Երկրիս այն կողմերը ուր մարդկութիւնը չունի առ ձեռն պատրաստ ոչ աղուճակ և ոչ աղային աղբիւրներ , տունկերէն կը հանեն պէտք եղած աղն : Քիչ տունկ կայ որ աղ չի բովանդակէ յինքեան , և կամ յետ այրելու իր մոխրոյն մէջ աղ չի գտնուի : Աւշնանատարը որ այնչափ շահաւոր է 'ի վաճառականութեան՝ այս կերպով կը հայթայթեն մարդիկ : Այս արդիւնքը յառաջ բերող բուսոց մէջ հետաքրքրական է թերեւս սառնատունկը (glacitera) , որ իր անուան հակառակ ջերմ տեղուանք կ'աճի : Այս տունկը յիրաւի գանձ մ'է Քանարեան կղզեաց ընակչացը որ կը մշակեն զայն և անկէ հանած աւշնանատարը վաճառականութեան կը հանեն :

Թէ և աշխարհիս ամեն կողմը ընդհանրապէս կը գտնուի ըսինք աղ , բայց

կան երկիրներ ալ ուր չի գտնուիր , ինչպէս Ափրիկէի այլևայլ կողմերը , ուր տեղեաց ժողովուրդները դեռ ևս բարբարոսութեան վիճակի մէջ ըլլալով՝ չեն գիտեր իրենց պէտքերը կամ 'ի բնութենէ հոգալ և կամ 'ի վաճառականութենէ : Մընգոփարզ ճանապարհորդը կ'ըսէ , որ « Եւրոպացին շատ պիտի զարմանայ երբ տեսնայ տղայ մը որ աղին կտորը կը ծըծէ շաքար ծծելու պէս : Ես շատ անգամ տեսայ այս խեղճ տեսարանը . աղքատները այս պատուական նիւթին անանկ կարօտ են , որ եթէ ըսես թէ մարդ մը իր կերակուրը աղով կ'ուտէ , անիկա շատ հարուստ մարդը ել է : Շատ դժուարութիւն քաշեցի , կ'ըսէ դարձեալ նոյն ճանապարհորդը , հոն աղ չի գտնուելուն համար . կանչեղէն կերակրոց գործածութիւնը անանկ սաստիկ աղի փափաք կը պատճառէին որ հասկըցնելն անհնարին է » :

Դարձեալ աղը շատ անգամ հրաբուխներէ արձակեալ նիւթոց հետխառն կը գտնուի : Ստէպ տեսնուած է որ հրաբխային ժայթքումէն ետքը վեսուվլերան պատառուածքներն ու ճեղքուածներն ծածկուած են աղի թանձրխառվ մը , և լավայի հեղեղատից մակերեսոյթն պնդացած և երբեմն ծածկուած կ'ըլլայ ճերմակի զարկած փոշով մը , որ ուրիշ բան չէ բայց եթէ աղ : Յամին 1822 վեսուվի բորբոքման ատեն Նաբոլիի տէրութիւնը հրաբխին բաժակին մօտ քսան ոտք խորանարդ տարածութեամբ աղի մեծամեծ կտորներ ժողովեց :

Աղը միշտ յարդ ունեցած է 'ի վաղժամանակաց անտի : Ոմանք 'ի նախկին ժողովրդոց նուիրական բնութիւն մ'ընծայեցին աղին . կրօնական պաշտամանց մէջ կը գործածուէր , և չըեայք ու հեթանովք զոհելի առարկայն կը սրբէին անով : Դարձեալ Ս . Գրոց մէջ ստէպ յիշատակուի աղը իրրև խորհրդական նշան իմաստութեան . և ասոր հակառակ դարձեալ իրրև նշան ամլութեան , ինչու որ աղն կընայ ամայցնել ամենաբերը երկիրներն իսկ :